



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1672
Մարտ 20, 1994

Հոգեւորի
Տ. Վահան Արղ. Յովհաննէսեան
Հովի Սրբոց Նահատակաց Եկեղեցոյ
Ֆէրմն.

Սիրելի Հայր Վահան,

Որպէս գնահատութիւն մեր թեմին մէջ ձեր մատուցած հոգեւոր օգտակար եւ նուիրեալ ծառայութեան, ինչպէս նաեւ ձեր խնամքին յանձնուած երիտասարդ եւ տարեց հաւատացեալներու հոգեւոր վերազարթումի ի նպաստ ձեր կատարած արդիւնաւոր գործունէութեան՝ մեզի համար հոգեկան ուրախութիւն է Վարդապետական չորս աստիճաններ շնորհել ձեզի այսօր լրնթացս Ս. Պատարագի:

Այս առթիւ ձեզի կու տանք նաեւ Հանջախաչ կրելու իրաւունքը, եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիպումներու ընթացքին:

Մենք յուսով ենք որ, որպէս Հոգեւոր Հովի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցոյ, նոյն եռանդով պիտի շարունակէք ձեր ստանձնած առաքելութիւնը եւ ձեր կարողութիւնները ի սպաս պիտի դնէք մեր եկեղեցոյ պայծառութեան եւ հաւատացեալներու բարօրութեան համար:

Կ'աղօթենք որ Սուրբ Հոգին առաջնորդ հանդիսանայ ձեզի:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԶ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ